ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՊԵԿ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ «ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 16 հունիսի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի հունիսի 8-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի միջեւ «Գյուղական կարողությունների ստեղծման ծրագիր» փոխառության համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2011 թվականի հունիսի 9-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով փոխառության համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի միջեւ «Գյուղական կարողությունների ստեղծման ծրագիր» փոխառության համաձայնագիրն (Փոխառության համաձայնագիր) ստորագրվել է 2011 թվականի հունիսի 8-ին:

2. Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամը Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է քսան միլիոն (20.000.000) ԱՄՆ դոլարի չափով փոխառություն՝ Փոխառության համաձայնագրի պայմաններին եւ դրույթներին համապատասխան գյուղական կարողությունների ստեղծման ծրագիր (Ծրագիր) իրականացնելու համար:

Ծրագրի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության գյուղական բնակավայրերում նվազեցնել աղքատությունը, ի թիվս այլ միջոցների, փոքր ծավալի արտադրություն ունեցողների ունեցվածքն ու եկամուտներն ավելացնելու միջոցով եւ նրանց համար մատչելի դարձնելով՝

ա) արտադրական եւ բարձրարտադրողական տեխնոլոգիաները եւ

բ) սոցիալական ու տնտեսական ենթակառուցվածքների օգուտները:

Ծրագիրը բաղկացած է չորս բաղադրիչներից.

ա) այգեգործական արտադրության հավելյալ արժեքի շղթայի ստեղծում, մասնավորապես, փոքր ծավալի արտադրություն ունեցողների ունեցվածքի ու եկամուտների ավելացում, ի թիվս այլ միջոցների, նրանց՝ պտղի եւ ընդեղենի արտադրության հավելյալ արժեքի շղթային կապելու միջոցով.

բ) գյուղական վայրերի ֆինանսավորում, մասնավորապես, գյուղական վայրերի փոքր եւ միջին ծավալի արտադրություն ունեցողների համար ֆինանսական ծառայությունների մատչելիության բարելավում.

գ) գյուղական ենթակառուցվածքներ, մասնավորապես, կենսամակարդակի բարձրացման նպատակով ենթակառուցվածքային ներդրումների պահանջի լրացում

եւ շահառուների որոշակի խմբերի կողմից իրենց տնտեսական ներուժն ամբողջությամբ օգտագործելուն աջակցում.

դ) Ծրագրի կառավարում:

Ծրագրի ավարտման ժամկետն է 2015 թվականի դեկտեմբերի 31-ը:

3. Փոխառության համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետեւյալ պարտավորությունները.

ա) վճարել տարեկան տոկոսավճար՝ փոխառության մայր գումարից դուրս գրված եւ օգտագործված գումարի երեք եւ երեք տասնորդական տոկոսադրույքի (3.3 տոկոս) չափով.

բ) վճարել տարեկան ծառայավճար՝ փոխառության մայր գումարից դուրս գրված եւ օգտագործված գումարի մեկ տոկոսի (1.0 տոկոս) չափով.

գ) համաֆինանսավորել Փոխառության համաձայնագրի հավելված 2-ով նախատեսված Ծրագրի գյուղական ենթակառուցվածքներ եւ Ծրագրի կառավարում բաղադրիչների գծով ծախսերի համապատասխանաբար 40.55 տոկոսը եւ 82 տոկոսը.

դ) արտոնյալ ժամկետի ավարտից անմիջապես հետո վերադարձնել մայր գումարը դոլարով կամ Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի ղեկավարության համար ընդունելի ազատ փոխարկելի որեւէ այլ արժույթով, որը պետք է լինի համարժեք վճարման պահին եւ վայրում շուկայական փոխանակման կուրսով հաշվարկված՝ դոլարով արտահայտված գումարի չափին: Վճարումները պետք է կատարվեն երեսուն (30) կիսամյակային վճարումներով՝ Փոխառության համաձայնագրի հավելված 3-ում նշված օրերին (2016 թվականի հունիսի 15-ից մինչեւ 2030 թվականի դեկտեմբերի 15-ը) եւ չափաբաժիններով:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2011 թվականի հունիսի 10-ին հավանություն է տվել սույն գործով քննության առարկա Փոխառության համաձայնագրին:

5. Փոխառության համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8 եւ 9-րդ հոդվածների դրույթներին, կոչված են ստեղծելու բարենպաստ պայմաններ տնտեսական գործունեության ազատության եւ ազատ տնտեսական մրցակցության ծավալման համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2011 թվականի հունիսի 8-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի միջեւ «Գյուղական կարողությունների ստեղծման ծրագիր» փոխառության համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

16 հունիսի 2011 թվականի
ՍԴՈ-976